

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Գոռ ՍԱՐԱԿՅԱՆ

ՀՊՏՀ «Բանկային գործ և ապահովագրություն»
ամբիոնի ասպիրանտ

Հիմնաբառեր. Բազել 3, իրացվելիության ռիսկ, բանկ,
Եվրասիական տնտեսական միություն

Իրացվելիության ռիսկի կարգավորումը բանկային գործունեության կարգավորման ամենակարևոր ուղղություններից է: Բանկային վերահսկող մարմինները սկսել են պատշաճ ուշադրություն դարձնել իրացվելիության ռիսկի կարգավորմանը հատկապես 2007-2009թթ. միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ մի շարք երկրների բանկային համակարգերում ի հայտ եկան իրացվելիության համակարգային խնդիրներ: Այս երևույթը բացատրվում է մի կողմից միջազգային պրակտիկայում վարկային և շուկայական ռիսկերի կարգավորման նկատմամբ հիմնական ուշադրության կենտրոնացմամբ, մյուս կողմից իրացվելիության ռիսկի կարգավորման միասնական ստանդարտների բացակայությամբ: Միջազգային փորձում իրացվելիության ռիսկի կառավարման վերաբերյալ առաջին փաստաթուղթը Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի «Իրացվելիության գնահատման և կառավարման հայեցակարգն» էր ¹: Այն ներկայացնում էր իրացվելիության գնահատման գործընթացում քանակական ու որակական գործոնների կարևորությունը, միջազգային բանկերում իրացվելիության կառավարման համակարգերի բաղադրիչները և առաջարկում էր գործարքների համակողմանի վերլուծության համակարգ: Այս փաստաթղթի հիմնական դրույթները, մասնավորապես այլընտրանքային սցենարներում ֆինանսական միջոցների պահանջների վերլուծությունը, ներգրաված միջոցների բազմազանեցումը, արտակարգ իրավիճակում պլանավորումը և տեղեկատվական համակարգերի կառավարումը կրում էին խորհրդատվական բնույթ: Վերոնշյալ դրույթները հետագայում թարմացվեցին «Բանկային կազմակերպություններում իրացվելիության կառավարման հիմնարար մոտեցումները» փաստաթղթում²: Այդ սկզբունքները շեշտադրում էին իրացվելիության կառավարման կառուցվածքների ներդրման, իրացվելիության և բանկային մյուս

¹ Basel Committee on Banking Supervision, Framework for Measuring and Managing Liquidity, Basel, 1992.

² Risk Management Group of the Basel Committee on Banking Supervision, Sound Practices for Managing Liquidity in Banking Organisations, Basel, 2000.


ռիսկերի փոխադարձ կապերի դիտարկման, արտակարգ իրավիճակներում պլանավորման և տեղեկատվության բացահայտման ու վերահսկողական գնահատման անհրաժեշտությունը:

Իրացվելիության ռիսկի կառավարման սկզբունքները հետագայում ևս մեկ անգամ թարմացվեցին «Իրացվելիության ռիսկի կայուն կառավարման և վերահսկողության սկզբունքները» փաստաթղթում: Այս դեպքում հավելյալ սահմանվեցին իրացվելիության ռիսկի ընդունելի մակարդակի հաստատման, իրացվելիության ռիսկի դրսևորման ձևերի գնահատման, խիստ սթրես թեստերի և արտակարգ իրավիճակում օպերատիվ պլանների մշակման, ներօրյա իրացվելիության ռիսկի կառավարման, շուկայական վարվերակերպի ամրապնդման նպատակով տեղեկատվության բացահայտման և այլ պահանջներ: Սակայն, այս սկզբունքները ևս կրում էին ընդհանրական բնույթ և չէին սահմանում իրացվելիության միասնական ստանդարտներ³: Եվ միայն Բազել 3 համաձայնագրի շրջանակում Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն առաջարկեց իրացվելիության ռիսկի կարգավորման ստանդարտներ, որոնք հիմք ծառայեցին իրացվելիության ռիսկի կարգավորման ազգային մոտեցումների ներդաշնակեցման համար: ԵՄ անդամ երկրների բանկային համակարգերի կարգավորման ամրապնդման փաթեթի շրջանակում իրացվելի միջոցների ծածկույթի պահանջ սահմանելիս ազգային բանկային վերահսկող մարմինները պետք է ներդնեն միայն Բազել 3 համաձայնագրի իրացվելիության ստանդարտներին համադրելի գործակիցներ⁴:

Բազել 3 համաձայնագիրը սահմանում է իրացվելիության ռիսկի կարգավորման 2 ստանդարտ: Առաջին ստանդարտը նպատակաուղղված է ամրապնդելու բանկերում իրացվելիության ռիսկ-պրոֆիլի կարճաժամկետ կայունությունը՝ ձևավորելով ազատ տնօրինվող բարձր իրացվելի ակտիվների բավարար պաշար: Երկրորդ ստանդարտը նպատակաուղղված է նվազեցնելու երկարաժամկետում բանկերում ֆինանսավորման ռիսկը՝ պահանջելով ֆինանսավորել գործառնությունները բավարար կայուն ֆինանսական միջոցներով: Այս ստանդարտների ներքո Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն առաջարկում է իրացվելիության ծածկույթի (ԻԾԳ) և զուտ կայուն ֆինանսավորման գործակիցները (ԶԿՖԳ)՝ որպես հիմնական տնտեսական նորմատիվներ:

³ Basel Committee on Banking Supervision, Principles for Sound Liquidity Risk Management and Supervision, Bank for International Settlements, Basel, 2008.

⁴ Regulation (EU) No 575/2013 of the European Parliament and the Council of 26 June 2013 on prudential requirements for credit institutions and investment firms and amending Regulation (EU) No 648/2012, Official Journal of The European Union, Vol. 156, Brussels, 2013, page L 176/13.



Գծապատկեր 1. Բազել 3 իրացվելիության նվազագույն ստանդարտների փոխկապվածությունը⁵

ԻԾԳ-ն պահանջում է բանկերից ձևավորել իրացվելի ակտիվների պաշար, որ կարող է օգտագործվել մեկամսյա նշանակալի սթրեսային իրավիճակում դրամական միջոցների զուտ արտահոսքը ծածկելու համար: Այս տնտեսական նորմատիվի ներդրումը բարելավում է բանկերի ունակությունը կլանելու սթրեսային իրավիճակից բխող շոկերը՝ նվազեցնելով ֆինանսական հատվածից իրական հատված վարակի տարածման ռիսկը: ԻԾԳ-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$ԻԾԳ = U_n / (U_3 - \min(U_3, (75\% \times U_3))),$$

որտեղ՝ U_n –ն բարձր իրացվելի ակտիվների հաշվարկային մեծությունն է,

U_3 –ն՝ մինչև 30 օր դրամական միջոցների արտահոսքի հաշվարկային մեծությունը,

U_3 –ն՝ մինչև 30 օր դրամական միջոցների ներհոսքի հաշվարկային մեծությունը:

ԻԾԳ-ի հաշվարկում բարձր իրացվելի ակտիվները տարանջատվում են 2 խմբի՝ առաջնային և երկրորդային: Առաջնային ակտիվները առավել իրացվելի են և տնտեսական նորմատիվի հաշվարկում ներառվում են առանց սահմանափակումների և ամբողջական գումարով: Երկրորդային ակտիվները պակաս իրացվելի են և տնտեսական նորմատիվի հաշվարկում ներառվում են զեղչադրույքներով և մասնաբաժնի սահմանափակումներով: Դրամական միջոցների հոսքերի հաշվարկում ակտիվների և պասիվների տարրերի գծով սահմանվում են տարբեր գործակիցներ: Ակտիվների գծով գործակիցները սահմանվում են՝ ելնելով դրանց որակի վատթարացման ու վերաֆինանսավորման անհրաժեշտության աստիճանից, իսկ պասիվների գծով՝ դրանց

⁵ Erste Bank Croatia, New liquidity measurements – LCR & NSFR, Zagreb, 2012, page 6.

իրացվելիության աստիճանից: Հատկանշական է, որ դրամական միջոցների զուտ արտահոսքի հաշվարկում դրամական միջոցների ներհոսքը ներառվում է դրամական միջոցների արտահոսքի առավելագույնը 75%-ի չափով:

Այս սահմանափակումը նախ և առաջ թույլ է տալիս ձևավորել լրացուցիչ բարձր իրացվելի ակտիվներ՝ որպես դրամական միջոցների հոսքերի պայմանագրային ժամկետներից շեղման դեպքում իրացվելիության ճեղքվածքի ծածկման բարձիկ: Մյուս կողմից, այն թույլ չի տալիս բանկերին իրացվելիության կառավարման գործընթացում հիմնվել բացառապես դրամական միջոցների հոսքերի համատեղման վրա, այլև ունենալ դրամական միջոցների արտահոսքի առնվազն 25%-ի չափով իրացվելի ակտիվների պաշար՝ որպես սթրեսային իրավիճակում պաշտպանական առաջնային բարձիկ⁶:

ՁԿՖԳ-ը պահանջում է բանկերից ապահովելու ակտիվների և հետհաշվեկշռային գործարքների կառուցվածքին համահունչ կայուն ֆինանսավորման պրոֆիլ⁷: Այս տնտեսական նորմատիվի ներդրումը նվազեցնում է հավանականությունը, որ մշտական ֆինանսավորման աղբյուրների խաթարումը կարող է հանգեցնել անվճարունակության ռիսկի ավելացմանը և համակարգային սթրեսի զարգացմանը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՁԿՖԳ} = \text{ՖՈ}_3 / \text{ՖՈ}_7,$$

որտեղ՝ ՖՈ_3 –ն հասանելի, կայուն ֆինանսավորման ռեսուրսներն են,

ՖՈ_7 –ն՝ պահանջվող կայուն ֆինանսավորման ռեսուրսները:

Հասանելի, կայուն ֆինանսավորման ռեսուրսները ներառում են կապիտալը, երկարաժամկետ պարտավորությունները, ինչպես նաև անժամկետ և կարճաժամկետ պարտավորությունների այն մասնաբաժինը, որ ենթադրվում են սթրեսային իրավիճակում կապիտանվեն բանկերի հաշվեկշռում: Այն հաշվարկվում է որպես նշված հոդվածների հանրագումար՝ կշռված դրանց կայունությունը բնութագրող գործակիցներով: Պահանջվող կայուն ֆինանսավորման ռեսուրսները ներառում են ակտիվների այն մասնաբաժինը, որ անհրաժեշտ է ֆինանսավորել կայուն ռեսուրսների միջոցով: Այն հաշվարկվում է որպես այդ ակտիվների հանրագումար՝ կշռված իրացվելիությունը բնութագրող գործակիցներով:

⁶ Gongol T., Vodová P., Liquidity Risk Regulation, Masaryk University Journal Financial Assets and Investing, vol. 5, Iss. 1, Brno, 2014, page 15.

⁷ Basel Committee on Banking Supervision, Basel III: The Net Stable Funding Ratio (Consultative Document), Bank for International Settlements, Basel, 2014, pp.1-2.

Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) երկրների բանկային համակարգերում իրացվելիության ռիսկը դեռևս կարգավորվում է ազգային մոտեցումների հիման վրա: Այդ մոտեցումների արդիականացման և ներդաշնակեցման նպատակով՝ անդամ երկրների կենտրոնական բանկերը և նախատեսում են փուլային ներդնել Բազել 3 համաձայնագրի իրացվելիության ստանդարտների հիմնադրույթները⁸: Այս տեսանկյունից գործնական ներդրման քայլեր է իրականացնել դեռևս միայն ՌԴ կենտրոնական բանկը: Այն ներդրել է կարծաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվը, որը բովանդակային առումով նույնական է Բազել 3 համաձայնագրի ԻՕԳ-ին⁹: Այն նպատակաուղղված է ձևավորել բանկերի հաշվեկշռում բարձր իրացվելի ակտիվներ, որոնք բավարար կլինեն ծածկելու դրամական միջոցների զուտ արտահոսքը սթրեսային 30 օրացուցային օրերի ընթացքում: Ի լրումն այս տնտեսական նորմատիվի՝ ՌԴ կենտրոնական բանկը պահպանել է նաև ակնթարթային, ընթացիկ և երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվները (ակնթարթային և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվների նվազագույն սահմանաչափերը կազմում են համապատասխանաբար 15% և 50%, իսկ երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվի առավելագույն սահմանաչափը՝ 120%): Ակնթարթային իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է զսպելու բանկերում իրացվելիության ռիսկը մեկ գործառնական օրվա ընթացքում և սահմանվում է որպես մեկ օրացուցային օրվա ընթացքում հասանելի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների (ճշգրտված իրական հատվածի ցպահանջ հաշիվների նվազագույն մնացորդի չափով) հարաբերություն: Ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է զսպելու իրացվելիության ռիսկը 30 օրացուցային օրվա ընթացքում և սահմանվում է որպես հաջորդող 30 օրացուցային օրվա ընթացքում բանկերի ստացվելիք բարձր իրացվելի ակտիվների և մինչև 30 օր ժամկետով (ներառյալ ցպահանջ) պարտավորությունների (ճշգրտված իրական հատվածի ցպահանջ հաշիվի նվազագույն մնացորդի չափով) հարաբերություն: Երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է զսպելու բանկերի երկարաժամկետ ակտիվներում ներդրումների հետևանքով իրացվելիության ռիսկը և սահմանվում է որպես 365 օրից ավելի մարման ժամկետով վարկային ներդրումների հարաբերություն ընդհանուր կապիտալի և 365 օրից ավելի մարման ժամկետով պարտավորու-

⁸ Информация о регулятивных режимах в сфере банковского регулирования и надзора в государствах – участниках СНГ, Евразийская Экономическая Комиссия, Москва, 2013, стр. 9-12, 21-22.

⁹ Центральный Банк Российской Федерации, Положение о порядке расчета показателя краткосрочной ликвидности (Базель III), Москва, Вестник Банка России № 62 (1540), Москва, 2014.

թյունների (ճշգրտված իրական հատվածի ցպահանջ հաշիվների նվազագույն մնացորդի չափով) հանրագումարին¹⁰:

Բելառուսի ազգային բանկը բանկերում իրացվելիության հսկողության նպատակով սահմանել է ակնթարթային, ընթացիկ, կարճաժամկետ և ընդհանուր իրացվելիության տնտեսական նորմատիվները (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 20%, 70%, 100% և 20%): Ակնթարթային և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվները նպատակաուղղված են զսպելու ցպահանջ և մինչև 30 օր (ներառյալ ցպահանջ) մարման ժամկետային հորիզոններում ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքում հնարավոր ճեղքվածքները: Ակնթարթային իրացվելիության տնտեսական նորմատիվը հաշվարկվում է որպես ցպահանջ ակտիվների և պասիվների հարաբերություն, իսկ ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվը՝ մինչև 30 օր (ներառյալ ցպահանջ) մարման ժամկետով ակտիվների և պասիվների հարաբերություն: Կարճաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է զսպելու մինչև 1 տարի ժամկետային հորիզոնում ակտիվների և պարտավորությունների հնարավոր ճեղքվածքը: Այն սահմանվում է որպես փաստացի իրացվելիության հարաբերություն պահանջվող իրացվելիությանը: Փաստացի իրացվելիության ցուցանիշը գնահատվում է որպես իրացվելի ակտիվների հաշվեկշռային արժեքի հանրագումար՝ կշռված վերջիններիս իրացվելիության գործակիցներով: Պահանջվող իրացվելիության ցուցանիշը գնահատվում է որպես ցպահանջ պարտավորությունների՝ կշռված դրանց արտահոսքի գործակիցներով, ժամկետանց պարտավորությունների և մինչև 1 տարի մարման ժամկետով ակտիվների և պարտավորությունների բացասական բացարձակ ճեղքվածքի հանրագումար: Ընդհանուր իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է բանկերի հաշվեկշռում ապահովելու բարձր իրացվելի ակտիվների պաշար և սահմանվում է որպես մեկամսյա ժամկետում հասանելի իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն¹¹:

Ղազախստանի ազգային բանկը բանկերում իրացվելիության ռիսկի հսկողության նպատակով սահմանել է ընթացիկ իրացվելիության և ժամկետային իրացվելիության տնտեսական նորմատիվները: Ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվը բանկերի համար սահմանում է բարձր իրացվելի ակտիվների նվազագույն ծածկույթի ապահովման պահանջ ցպա-

¹⁰ Центральный Банк Российской Федерации, Инструкция № 139-И об обязательных нормативах банков, Вестник Банка России № 74 (1392), Москва, 2012, стр.18-21.

¹¹ Национальный Банк Республики Беларусь, Инструкция о нормативах безопасного функционирования для банков и небанковских организаций, Минск, 2006, пункты 60-77.

հանջ պարտավորությունների գծով: Այն հաշվարկվում է որպես բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն (նվազագույն սահմանաչափը՝ 30%): Ժամկետային իրացվելիության տնտեսական նորմատիվները նպատակաուղղված են զսպելու ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքում ճեղքվածքները կարծաժամկետ հորիզոնում: Վերջիններս սահմանվում են մինչև 7 օր, մինչև 1 ամիս և մինչև 3 ամիս մարման ժամկետային հորիզոնների համար՝ հաշվարկվելով որպես համապատասխան ժամկետային հորիզոնում բանկի իրացվելի ակտիվների և պարտավորությունների հարաբերություն (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 100%, 90% և 80%): Այս տնտեսական նորմատիվները հաշվարկվում են համախառն սկզբունքով բոլոր արժույթների և ազատ փոխարկելի արտարժույթների խմբի ու ոչ պակաս փոխարկելի արտարժույթների համար¹²:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է ընդհանուր և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվները (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%): Ընդհանուր իրացվելիության տնտեսական նորմատիվը նպատակաուղղված է դրամական միջոցների կանխատեսված և չկանխատեսված հոսքերի, իսկ ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվը՝ ցպահանջ պարտավորությունները ծածկելու համար ձևավորելու բարձր իրացվելի ակտիվների անհրաժեշտ պաշար: Ընդհանուր իրացվելիությունը հաշվարկվում է որպես բարձր իրացվելի ակտիվների հարաբերություն ընդհանուր ակտիվներին, իսկ ընթացիկ իրացվելիությունը՝ բարձր իրացվելի ակտիվների հարաբերություն ցպահանջ պարտավորություններին: Այս տնտեսական նորմատիվները հաշվարկվում են ինչպես համախառն սկզբունքով բոլոր արժույթների, այնպես էլ ազատ փոխարկելի արտարժույթների խմբի և պակաս փոխարկելի արտարժույթների համար¹³:

ԵՏՍ երկրների բանկային համակարգերում իրացվելիության ռիսկի կարգավորման ազգային դաշտերի համեմատական վերլուծության համատեքստում նշված մոտեցումների առանձնահատկությունները ամփոփ ներկայացված են աղյուսակ 1-ում:

¹² АРК по регулированию и надзору финансового рынка и финансовых институтов, Инструкция о нормативных значениях и методике расчетов пруденциальных нормативов для банков второго уровня, 2005, Алматы, стр. 40-44.

¹³ ՀՀ ԿԲ խորհրդի 2007թ. փետրվարի 9-ի թիվ 39-ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2.

Աղյուսակ 1. ԵՏՍ երկրների բանկային համակարգերում իրացվելիության ռիսկի կարգավորման մոտեցումները

N	Երկիր	Բելառուս	Ղազախստան	Հայաստան	Ռուսաստան
Զավահանջներ	Իրացվելիության հասկացություն	պաշարային հոսքային	հոսքային	պաշարային	պաշար- հոսքային
	Իրացվելիության ռիսկի դրսևորման ձևեր	Ֆինանսավորման իրացվելիություն	Ֆինանսավորման իրացվելիություն	Ֆինանսավորման իրացվելիություն	Ֆինանսավորման և շուկայական իրացվելիություն
	Կառավարման տեսություններ	Տեղափոխության տեսություն Առևտրային վարկի տեսություն	Տեսությունների կոմբինացիա	Տեղափոխության տեսություն	Տեսությունների կոմբինացիա
	Իրացվելիության ռիսկի բնույթ	հաշվի չի առնում	հաշվի չի առնում	հաշվի չի առնում	մասնակի է հաշվի առնում ¹⁴
	Գնահատականի բնույթ	քվադի ապագային միտված	քվադի ապագային միտված	անցյալին միտված	քվադի ապագային միտված

ԵՏՍ անդամ երկրների բանկային համակարգերում իրացվելիության տնտեսական նորմատիվների առավելությունների և թերությունների տեսանկյունից՝ ՌԴ կենտրոնական բանկի իրացվելիության տնտեսական նորմատիվներին բնորոշ է 2 առանձնահատկություն: Առաջին, այն նպաստում է բանկերում իրացվելիության կառավարման արդյունավետության բարձրացմանը: Ակնթարթային և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվները, դիտարկելով բանկերի կողմից ներգրաված միջոցների չնվազող մնացորդը, խթանում են միջոցառումներ ձեռնարկելու բարելավելու ներգրաված միջոցների կայունությունը: Այս հանգամանքը թույլ է տալիս բանկերին երկարաժամկետում ապահովելու բավարար ընթացիկ իրացվելիություն ներգրաված միջոցների գծով բարձր իրացվելի ակտիվների համեմատաբար փոքր ծածկույթի միջոցով: Երկրորդ, երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվը նպաստում է բանկերի իրացվելիության երկարաժամկետ ռիսկ-պրոֆիլի կայունությունը ամրապնդմանը: Այս տնտեսական նորմատիվը պահանջում է բանկերից երկարաժամկետ վարկային պահանջների առնվազն 85%-ը ֆինանսավորել երկարաժամկետ պասիվների միջոցով՝ խթանելով ակտիվների և պասիվների կայուն կառուցվածքի ձևավորմանը:

¹⁴ Իրացվելիության ռիսկի ցածր հավանականային և մեծածավալ վնասներ պատճառելու բնույթը դիտարկվում է միայն կարճաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվի շրջանակներում:

Ղազախստանի ազգային բանկի իրացվելիության տնտեսական նորմատիվների առաջնային առանձնահատկությունն այն է, որ դիտարկվում է բանկերում արտարժույթային իրացվելիության ռիսկը: Ժամկետային իրացվելիության տնտեսական նորմատիվները, հաշվարկվելով ըստ հիմնական արտարժույթների, ապահովում են իրացվելի ակտիվների և պարտավորությունների արժույթային կառուցվածքի համապատասխանելիությունը՝ զսպելով արտարժույթային իրացվելիության ռիսկը: Հաջորդ առանձնահատկությունը այն է, որ ժամկետային իրացվելիության տնտեսական նորմատիվները խթանում են բանկերի կողմից ժամկետայնության ձևափոխման գործառույթի արդյունավետության բարձրացումը: Այս տնտեսական նորմատիվները սահմանում են մինչև 3 ամիս ժամկետային հորիզոնների համար դրանց երկարության աճին զուգահեռ պարտավորությունների գծով իրացվելի ակտիվների ծածկույթի աստիճանական մեղմ պահանջներ: Այս պայմաններում բանկերը կարող են երկար ժամկետային հորիզոններում ունենալ ակտիվների և պասիվների զգալի ճեղքվածքներ և մարման ժամկետների մոտեցմանը զուգընթաց աստիճանաբար կրճատել դրանք՝ բարելավելով ժամկետայնության ձևափոխման գործառույթի արդյունավետությունը:

Բելառուսի ազգային բանկի իրացվելիության տնտեսական նորմատիվներին բնորոշ առանձնահատկությունը իրացվելիության համեմատաբար խիստ պահանջներն են: Նախ, ի լրումն ցպահանջ և մինչև 30 օր ժամկետային հորիզոնների համար պարտավորությունների գծով իրացվելի ակտիվների ծածկույթի ապահովման խիստ պահանջների, սահմանվում է ակտիվների առնվազն 20%-ի չափով բարձր իրացվելի ակտիվների տնօրինման պահանջ: Այնուհետև բավականին խիստ սահմանափակվում է մինչև 1 տարի մարման ժամկետային հորիզոնում ակտիվների և պարտավորությունների ժամկետային ճեղքվածքը: Այս սահմանափակումները թույլ են տալիս ապահովել բանկային համակարգի կարճաժամկետ իրացվելիության բավարար մակարդակ, սակայն, մյուս կողմից, նվազեցնում են բանկերի կողմից ժամկետայնության ձևափոխման գործառույթի արդյունավետությունը:

ՀՀ կենտրոնական բանկի սահմանած իրացվելիության տնտեսական նորմատիվների համակարգի առանձնահատկությունն այն է, որ կենտրոնացված է բանկերի հաշվեկշռում մշտապես ապահովելու բարձր իրացվելի ակտիվների բավարար պաշար, իսկ ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի կառավարումը քննարկվում է որպես ներքին հսկողության համակարգի շրջանակում ինքնուրույն սահմանվող պարտադիր գործընթաց: Ընդհանուր իրացվելիության տնտեսական նորմատիվը բանկերի համար սահմանում է բարձր իրացվելի ակտիվների նվազագույն ծածկույթի ապահովման պահանջ՝ անկախ պարտավորությունների ժամկետային, արժույթային

յին և պարտատերերի կառուցվածքից: Ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվը ճշգրտում է բարձր իրացվելի ակտիվների մեծությունը՝ իրացվելիության ծածկույթի պահանջը սահմանելով նաև ցպահանջ պարտավորությունների նկատմամբ: Ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի կառավարմանը ներկայացվող պահանջները ընդհանրական բնույթի են և սահմանվում են բանկերում ներքին հսկողության նվազագույն պահանջների շրջանակում:

Բազել 3 համաձայնագրի իրացվելիության պահանջների հետ համատեղելիության առումով՝ ՌԴ կենտրոնական բանկի և Բելառուսի ազգային բանկի ակնթարթային և ընթացիկ իրացվելիության, Յայաստանի կենտրոնական բանկի ընթացիկ իրացվելիության և Ղազախստանի ազգային բանկի ընթացիկ և մինչև 1 ամիս ժամկետային իրացվելիության տնտեսական նորմատիվները որոշակիորեն ծածկում են ԻԾԳ-ը: Այդուհանդերձ, այս գործակցի համեմատ նշված տնտեսական նորմատիվներին բնորոշ է 2 թերություն: Առաջին, այս տնտեսական նորմատիվները անտեսում են շուկայական իրացվելիության ռիսկը: Տնտեսական նորմատիվների հաշվարկում իրացվելի ակտիվների համար չեն սահմանվում շուկայի իրացվելիության չափանիշներ, և բոլոր ակտիվները ներառվում են հաշվեկշռային արժեքով: Արդյունքում թերազնահատվում է շուկայական պայմանների փոփոխության ազդեցությունը ակտիվների իրացվելիության վրա: Երկրորդ, տնտեսական նորմատիվները ընդհանրական են գնահատում ֆինանսավորման իրացվելիության ռիսկը: Բանկերի կարճաժամկետ պարտավորությունների համար իրացվելի ակտիվների ծածկույթ սահմանելիս՝ նշված տնտեսական նորմատիվների հաշվարկում հաշվի չեն առնվում պարտատերերի կարգավիճակը, ճյուղային պատկանելիությունը և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով դրամական միջոցների հավանական հոսքերը:

Ի լրումն շուկայական և ֆինանսավորման իրացվելիության ռիսկերի համապարփակ գնահատման հնարավորությունների՝ ԻԾԳ-ը կարող է ծառայել նաև որպես համակարգային իրացվելիության ռիսկի զսպման մակրոպրոլեկցիալ գործիք: Այդ նպատակով Բազել 3 համաձայնագրի շրջանակում առաջարկվում է սթրեսային իրավիճակում նվազեցնել ԻԾԳ-ի համար սահմանված նվազագույն սահմանաչափը: Այս դեպքում բնականոն տնտեսական գործունեության պայմաններում բանկերը ձևավորում են իրացվելի ակտիվների պաշար, որը կարող է օգտագործվել սթրեսային իրավիճակում դրամական միջոցների արտահոսքը ծածկելու համար: Այս համատեքստում Յան Վիլեմ վան դեն Էնդը և Մարկ Կրուլդիոֆը առաջարկում են սթրեսային

իրավիճակում ընդլայնել իրացվելի ակտիվների շրջանակը¹⁵: Վերջիններիս նշում են, որ Բազել 3 համաձայնագրի մոտեցումը հետաձգում է բանկերի հաշվեկշռի ճշգրտումները և հանգեցնում են ճշգրտումների ճգնաժամի վերջին փուլում, հետևաբար այն կարող է արդյունավետ լինել կարճաժամկետ ճգնաժամերի դեպքում: Մինչդեռ բարձր իրացվելի ակտիվների շրջանակի ընդլայնումը ավելի արդյունավետ կարող է լինել բանկերի ճգրտող գործողությունների և ճգնաժամի երկրորդային էֆեկտների ազդեցությունը մեղմելու տեսանկյունից: Սակայն այս դեպքում էլ գերազանհատվում է բանկերի իրացվելիության դիրքը:

ՌԴ կենտրոնական բանկի կողմից սահմանված երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվը, նպատակ ունենալով զսպելու ֆինանսական միջնորդության հետևանքով ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի ճեղքվածքը, որոշակիորեն ծածկում է ՋԿՖԳ-ը: Սակայն, եթե ՋԿՖԳ-ի դեպքում դիտարկվում են մի շարք չափանիշներ (պասիվների բնույթ, տեսակ, պարտապանի կարգավիճակ, ակտիվների բնույթ, իրացվելիություն և որակ), ապա երկարաժամկետ իրացվելիության տնտեսական նորմատիվի դեպքում շեշտը դրվում է ակտիվների և պասիվների ժամկետայնության և իրացվելիության վրա: Այս տեսանկյունից ՋԿՖԳ-ը առավել ճշգրիտ է գնահատում ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի ճեղքվածքը:

Այսպիսով, իրացվելիության կարգավորման միջազգային փորձի վերլուծության հիման վրա կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները.

1. վերահսկող մարմինների կողմից վարկային և շուկայական ռիսկերի կարգավորման նկատմամբ հիմնական ուշադրության կենտրոնացման պայմաններում իրացվելիության ռիսկի կարգավորման գործընթացը հիմնվել է բացառապես ազգային չափորոշիչների վրա: Այս համատեքստում Բազել 3 համաձայնագրի շրջանակներում իրացվելիության ռիսկի կարգավորման ստանդարտները յուրօրինակ հիմք են ծառայում իրացվելիության ռիսկի կարգավորման ազգային մոտեցումների արդիականացման և ներդաշնակեցման համար: Եվրամիության անդամ երկրների բանկային համակարգի կարգավորման ամրապնդման փաթեթի շրջանակներում նախատեսվում է Բազել 3 համաձայնագրի իրացվելիության ստանդարտների ներդրման միջո-

¹⁵ End J. W. van den, Kruidhof M., Modelling the liquidity ratio as macroprudential instrument, Journal of Banking Regulation, volume 14, number 2, Macmillan Publishers Ltd., Basingstoke, 2013, pp. 91-106.

ցով ներդաշնակեցնել իրացվելիության կարգավորման դաշտերը միության անդամ բոլոր երկրների բանկային համակարգերում:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների բանկային համակարգերում ևս ներդրված չէ իրացվելիության ռիսկի կարգավորման միասնական մոտեցում, չնայած կարճաժամկետ իրացվելիության ապահովման պահանջների մասով առկա է որոշակի ընդհանրություն: Միության հիմնադիր երկրների կենտրոնական բանկերի սահմանած իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները նպատակաուղղված են զսպելու ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի ճեղքվածքները, մինչդեռ ՀՀ ԿԲ սահմանած իրացվելիության տնտեսական նորմատիվները կենտրոնացված են բանկերի հաշվեկշռում մշտապես ապահովելու բարձր իրացվելի ակտիվների բավարար պաշար, իսկ ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի կառավարման պահանջները սահմանվում են բանկերում ներքին հսկողության նվազագույն պահանջների շրջանակում:

3. Բազել 3 իրացվելիության ստանդարտների ներդրումը սկզբունքային կարևորություն ունի ՀՀ բանկային համակարգում իրացվելիության կարգավորման բարելավման առումով: ԵՏՄ երկրների բանկային համակարգերում իրացվելիության նորմատիվային պահանջների հետ համատեղելիության առումով Բազել 3 իրացվելիության ստանդարտները ոչ միայն փոխարինում են միության երկրներում իրացվելիության տնտեսական նորմատիվները, այլև իրացվելիության կարգավորման գործընթացին տալիս է մակրոպրոդեցնցիալ բնույթ: Այս տեսանկյունից ՀՀ բանկային համակարգում Բազել 3 իրացվելիության ստանդարտների ներդրումը մի կողմից թույլ կտա իրացվելիության կարգավորման գործընթացում համապարփակ դիտարկել իրացվելիության ռիսկի հիմնական դրսևորումները, մյուս կողմից իրացվելիության կարգավորման գործընթացը դարձնել համահունչ միջազգային փորձին:

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՑԿԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Գոռ ՍԱՅԱԿՅԱՆ

Բանալի բառեր` Բազել 3, իրացվելիության ռիսկ, բանկ, Եվրասիական տնտեսական միություն

Իրացվելիության ռիսկը բանկային գործունեությանը բնորոշ կարևոր ռիսկերից է, որի կարգավորման նկատմամբ վերահսկող մարմինները պատշաճ ուշադրություն սկսեցին դարձնել հատկապես 2007-2009 թթ. միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո: Այս ոլորտում միջազգային ստանդարտների բացակայության պայմաններում ազգային վերահսկող մարմինները ներդրել են տարբեր մոտեցումներ: Այս տեսանկյունից Բազել 3 համաձայնագրի իրացվելիության նվազագույն ստանդարտները միասնական հիմք ծառայեցին ազգային կարգավորման դաշտերի արդիականացման և ներդաշնակեցման համար:

**АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА РЕГУЛИРОВАНИЯ РИСКА
ЛИКВИДНОСТИ В БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**

Гор СААКЯН

Ключевые слова: Базель 3, риск ликвидности, банковский сектор, Евразийский экономический союз

Риск ликвидности является одним из важных банковских рисков, регулирование которого в центре внимания надзорных органов оказалось особенно после глобального финансового кризиса 2007-2009. В условиях отсутствия международных стандартов регулирования риска ликвидности, национальные надзорные органы внедрили разнообразные подходы. С этой точки зрения, минимальные стандарты ликвидности соглашения Базель 3 послужили единой основой для модернизации и гармонизации национальных нормативно-правовых баз.

**ANALYSIS OF INTERNATIONAL PRACTICES IN REGULATION
OF LIQUIDITY RISK IN THE BANKING INDUSTRY**

Gor SAHAKYAN

Keywords: Basel 3, liquidity risk, banking sector, Eurasian Economic Union

Liquidity risk is considered to be an important banking risk, whilst supervisory authorities paid proper attention on its regulation especially after the global financial crisis of 2007-2009. In the absence of international standards in the liquidity risk regulation, national supervisory authorities introduced heterogeneous regulatory approaches. In this context, Basel 3 minimum liquidity standards served a common basis for the modernization and harmonization of national regulatory frameworks.

This article presents concepts of Basel 3 liquidity requirements, discusses main features of national regulatory frameworks of liquidity risk in the member states of Eurasian Economic Union and considers their compatibility with Basel 3 liquidity standards.